

ՀՀ Արմավիր մարզպետ Համբարձում Մաթևոսյանին

Տեղեկություն ստանալու հարցում


Պարոն Մաթևոսյան, համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել հետևյալ հարցերի պատասխանները:

1. «Արմավիրի մարզի տասնյակ համայնքներ 2019 թվականին խմելու ջուր չունեին (<https://hetq.am/hy/article/111531>) : Ներկայումս քանի՞ համայնք կա, որոնք այս պահին խմելու ջրի հետ կապված խնդիրներ ունեն: Որո՞նք են այդ համայնքները:
2. Ի՞նչ աշխատանքներ են տարվում խնդիրների կարգավորման համար:
3. Քանի՞ համայնք է «Վեոլիա Ջուր» ընկերության բաժանորդ, քանի՞ սն են օգտվում արտեզյան հորերից, լեռնային աղբյուրներից:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Շնորհակալություն

Հանրային հեռուստաընկերության լրատվական ծառայության լրագրող Անի Օհանյան 

(հեռ. 094 44 23 29, էլ.փոստ aniarami90@gmail.com)

22.07. 2021 թ.